1. Բարեգործական որակել «Սպիտակ ֆերմեր» գյուղատնտեսության աջակցող ասոցիացիա հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ Լոռու մարզի, քաղ.Սպիտակ, Ալեք Մանուկյան 5/1, ՀՎՀՀ՝ 06804407) իրականացվող՝ 39,836,050 դրամ արժողությամբ «ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Ան.Շիրակացու անվան N 8 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ում կրթության համար բարենպաստ պայմանների ստեղծում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Սպիտակ ֆերմեր» գյուղատնտեսության աջակցող ասոցիացիա հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Դանիելյան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06801811) 2018 թվականի մարտի 12-ին կնքված՝ N Դ-03/18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման համակարգի սարքավորումների և գույքի ձեռքբերում՝ 20,176,786 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Շտիգեն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01574905) 2018 թվականի մարտի 12-ին կնքված՝ N Դ-04-18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արևային կայանի ձեռքբերում՝ 18,999,264 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



3) «Բեյքեր Թիլլի Արմենիա» ФԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02586575) 2018 թվականի մարտի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 660,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Սպիտակ ֆերմեր» գյուղատնտեսության աջակցող ասոցիացիա հասարակական կազմակերպությանը՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

**«Սպիտակ-Ֆերմեր» հասարակական կազմակերպության նախագահի կողմից «27» մարտի 2018թ.**

**«ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Ան. Շիրակացու անվան N8 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ում կրթության համար բարենպաստ պայմանների ստեղծում» ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1. | **Ծրագրի նպատակը** | Ծրագրի շնորհիվ կջեռուցվեն դպրոցի բոլոր 10 մասնաշենքերը, այդ թվում նաև սպորտ դահլիճն ու լողավազանը, լաբորատորիաներն ու միջանցքները: Իսկ տեղադրվող արևային կայանը հնարավորություն կտա կրկնակի կրճատել ջեռուցման ծախսերը: Ներկայումս տարեկան ջեռուցման համար ծախսվող գումարով հնարավոր է լինում ջեռուցել ընդամենը 2 մասնաշենք, իսկ ծրագրի ավարտից հետո նույն գումարով կջեռուցվեն դպրոցի բոլոր 10 մասնաշենքերը՝ դասարաններում 12 աստիճանի փոխարեն ապահովելով 20 աստիճան ջերմություն:<br>Կտեղադրվեն չորս թեքահարթակներ, որոնք կօգնեն հասանելի դարձնել դպրոցի բոլոր մասնաշենքերը հենաշարժողական խնդիր ունեցող աշակերտներին:<br>Կվերանորոգվի դպրոցի լաբորատորիաների հատակները, որի շնորհիվ հնարավորություն կստեղծվի լիարժեք դասընթացների կազմակերպումը: |
| 2. | **Ծրագրի բարեգործական որակման նպատակը** | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | **Բարեգործը** | Ճապոնիայի կառավարություն՝ ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատան միջոցով |
| 4. | **Ծրագիրը կատարողը** | «Սպիտակ-Ֆերմեր» գյուղատնտեսությանը աջակցող ասոցիացիա հասարակական կազմակերպություն, ՀՎՀՀ 06804407, Լոռու մարզ, ք. Սպիտակ, Ալեք Մանուկյան 5/1 |
| 5. | **Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը** | ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, կրթական |
| 6. | **Ծրագրի բյուջեն** | 39,836,050 ՀՀ դրամ |
| 7. | **Բարեգործություն ստացողը** | ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Ան. Շիրակացու անվան N8 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ, ՀՎՀՀ 06802668, ք. Սպիտակ, Ուզբեկական 64 |
| 8. | **Ծրագրի իրականացման տևողությունը** | 11.03.2018 – 15.10.2018 |
| 9. | **Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը** | Ծրագրի շրջանակներում փոխվելու և արդիականացվելու է դպրոցի ամբողջ ջեռուցման համակարգը.<br>1.Կառուցվելու է 40կվտ/ժ հզորության արևային ֆոտովոլտային կայան, արժեքը 18,999,264 ՀՀ դրամ, աշխատանքների կատարման ժամկետ՝ 11.03.2018 - 15.03.2018<br>2. Տեղադրվելու է 55կվտ/ժ հզորության կոնդենսացիոն 8 ջեռուցման կաթսա, կառուցվելու է ջեռուցման ներքին ցանց, արժեքը 17,343,298 ՀՀ դրամ, աշխատանքների կատարման ժամկետ՝ 11.03.2018 - 15.03.2018<br>3. Չորս թեքահարթակների տեղադրում հաշմանդամ երեխաների համար, արժեքը 1,839,936 ՀՀ դրամ, աշխատանքների կատարման ժամկետ՝ 11.03.2018 - 15.03.2018<br>4. Դասասենյակների հատակների մասնակի վերանորոգում, արժեքը 993,552 ՀՀ դրամ, աշխատանքների կատարման ժամկետ՝ 11.03.2018 - 15.03.2018<br>5. Աուդիտ՝ 660,000 ՀՀ դրամ, աշխատանքների կատարման ժամկետ՝ 11.03.2018 - 15.03.2018 |
| 10. | **Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը** | 1. 40կվտ/ժ հզորության արևային ֆոտովոլտային կայան, արժեքը 18,999,264 ՀՀ դրամ, ձեռքբերում<br>2. 55կվտ/ժ հզորության կոնդենսացիոն 8 ջեռուցման կաթսա, ջեռուցման ներքին ցանց, արժեքը 17,343,298 ՀՀ դրամ, ձեռքբերում<br>3. 4 թեքահարթակներ հաշմանդամ երեխաների համար, արժեքը 1,839,936 ՀՀ դրամ, ձեռքբերում<br>4. 420 քառ.մ մակերեսով ռետինե հատակ, արժեքը 993,552 ՀՀ դրամ, ձեռքբերում<br>5. Աուդիտորական ծառայություն, արժեքը՝ 660,000 ՀՀ դրամ |
| 11. | **Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը** | Աուդիտորական ծառայություն, արժեքը՝ 660,000 ՀՀ դրամ |
| 12. | **Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ** | ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Ան. Շիրակացու անվան N8 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ, ՀՎՀՀ 06802668, ք. Սպիտակ, Ուզբեկական 64<br>ՀՀ Լոռու մարզպետարան, ք. Վանաձոր, Հայքի հրապարակ |
| 13. | **Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը** | Մշտադիտարկում և վերահսկում Ճապոնիայի դեսպանատան, «Սպիտակ-Ֆերմեր» գյուղատնտեսությանը աջակցող ասոցիացիա հասարակական կազմակերպության և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով, ֆինանսական և ծրագրի իրականացման մոնիտորինգ՝ անկախ աուդիտորական կազմակերպության և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով: |

Լր. 4/5

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

01.1/14-2/6025-18
03.04.18թ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
28.03.2018թ. N 15/15.9/4858-18 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Սպիտակ ֆերմեր» գյուղատնտեսության աջակցող ասոցիացիա հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Ան.Շիրակացու անվան N 8 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ում կրթության համար բարենպաստ պայմանների ստեղծում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/10062-18
03.04.18թ

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

Լր. 4/5

«04» 04 2018թ.
No 06/3-8/16659-18
Ձեր No ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 28.03.2018թ.
թիվ 15/15.9/4858-18 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Սպիտակ ֆերմեր» գյուղատնտեսության աջակցող ասոցիացիա հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Ան.Շիրակացու անվան N 8 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ում կրթության համար բարենպաստ պայմանների ստեղծում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկում ենք նախագծի 2-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերում ուղղել «Դանիելյան» ՍՊԸ-ի և «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի ՀՎՀՀ-ները:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Ն.Բեժանյան, Հեռ. 060544705

044/10096-18
04.04.18թ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

Կր. 4/5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ artur.hovhannisyan@justice.am

29.03.18 N 02/14/52362-18

Ձեր N ____________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 28-ի 15/15.9/4858-18 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Սպիտակ Ֆերմեր» գյուղատնտեսության աջակցող ասոցիացիա հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Ան.Շիրակացու անվան N 8 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ում կրթության համար բարենպաստ պայմանների ստեղծում» ծրագրի 1-ին կետի կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ծրագիրը բացի ջեռուցման ապահովումից նախատեսում է նաև թեքահարթակների տեղադրում և դասասենյակների հատակների վերանորոգում: Այդ առումով ծրագրի դրույթներն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

035/9637-18

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

29.03.18

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն

---

Կր. 4/5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1 ☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ 101/104 32/2009-18

« 03 » 04 2018 թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր 29.03.2018 թ. 15/15.9/4858-18 համարի գրությանը

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Կարևորում եմ «Սպիտակ ֆերմեր» գյուղատնտեսության աջակցող ասոցիացիա հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 39,836,050 դրամ արժողությամբ «ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Ան.Շիրակացու անվան N 8 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ում կրթության համար բարենպաստ պայմանների ստեղծում» ծրագիրը և չեմ առարկում այն որակել որպես բարեգործական:

Հարգանքով՝

ՄԱՐԶՊԵՏ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

կատ. Ս.Լամբարյան
հեռ. /0322/ 2-33-99

114/9927-18
03.04.18

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Սպիտակ ֆերմեր» գյուղատնտեսության աջակցող ասոցիացիա հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Ան.Շիրակացու անվան N 8 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ում կրթության համար բարենպաստ պայմանների ստեղծում» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ արդարադատության նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Հայտնում ենք, որ «Սպիտակ Ֆերմեր» գյուղատնտեսության աջակցող ասոցիացիա հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Ան.Շիրակացու անվան N 8 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ում կրթության համար բարենպաստ պայմանների ստեղծում» ծրագրի 1-ին կետի կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ծրագիրը բացի ջեռուցման ապահովումից նախատեսում է նաև թեքահարթակների տեղադրում և դասասենյակների հատակների վերանորոգում: Այդ առումով ծրագրի դրույթներն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջները: | Առաջարկությունը հաշվի է առնվել լրամշակված ծրագիրը կցված է: |
| **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի վերաբերյալ առաջարկում ենք նախագծի 2-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերում ուղղել «Դանիելյան» ՍՊԸ-ի և «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի ՀՎՀՀ-ները: | Առաջարկությունը հաշվի է առնվել լրամշակված նախագիծը կցված է: |

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Գ-03/18

Ք. Սպիտակ 12 մարտի, 2018թ.

«Սպիտակ-Ֆերմեր» ՀԿ-ն, ի դեմս ՀԿ գործադիր տնօրեն Սարգիս Մարկոսյանի, որը գործում է ՀԿ կանոնադրության համաձայն մի կողմից այսուհետ «Գնորդ» և «Դանիելյան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տիգրան Դանիելյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության համաձայն այսուհետ «Վաճառող», մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

## 1. *Պայմանագրի առարկան*

1.1. Վաճառողը պարտավորվում է Հայաստանում Նապոնիայի դեսպանատան ֆինանսավորմամբ « Սպիտակի թիվ 8 դպրոցում կրթության համար բարենպաստ պայմանների ստեղծում » ծրագրի շրջանակներում՝ 11.03.2018թ. ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատան և «Սպիտակ-Ֆերմեր» ՀԿ-ի միջև կնքված դրամաշնորհի պայմանագրային պարտավորությունները կատարելու նպատակով Գնորդին հանձնել սույն պայմանագրի հավելված 1-ում նշված գույքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այն և վճարել դրա դիմաց ծրագրի ֆինանսական միջոցներից:

## 2. *Կողմերի իրավունքները և պարտականությունները*

**2.1.Վաճառողն իրավունք ունի, եթե՝**

2.1.1. Գնորդը ժամանակին չի վճարել սույն պայմանագրին համապատասխան հանձնված գույքի համար, պահանջել վճարելու նաև տոկոսներ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածին համապատասխան.

**2.2. Վաճառողը պարտավոր է՝**

2.2.1. պայմանագրի 1.1 կետում նշված գույքը, Գնորդին հանձնել հանձնման-ընդունման ակտով սույն պայմանագիրն ստորագրելուց հետո 2 /երկու/ ամսվա ընթացքում, սույն պայմանագրով կանխավճարը ստանալու օրվանից:

2.2.2. գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ գույք.

2.2.3. մինչև սույն պայմանագրի կատարումը ծագած հիմքով երրորդ անձանց կողմից գույքի առգրավելու դեպքում հատուցել Գնորդի վնասները

2.2.4. գնորդին հանձնել սույն պայմանագրով որոշված տեսականու գույք.

2.2.5. գնորդին հանձնել սույն պայմանագրին համապատասխան որակի գույք.

2.2.6.գնորդին հանձնել այնպիսի գույք, որը նախատեսված լինի օգտագործել 18 ամիս երաշխիքային ժամկետով, որի ընթացքում Վաճառողի մեղքով առաջացած թերությունները վերացվում են Վաճառողի միջոցներով

2.2.7.գնորդին հանձնել սույն պայմանագրի 1.1 կետով սահմանված պայմաններին համապատասխանող գույք

**2.3. Գնորդն իրավունք ունի՝**

2.3.1. հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, եթե Վաճառողը հրաժարվում է հանձնել վաճառված գույքը.

2.3.2. եթե Վաճառողը Գնորդին հանձնել է սույն պայմանագրով որոշվածից պակաս քանակի գույք, պահանջել հանձնելու պակաս հանձնված քանակը կամ հրաժարվել հանձնված գույքից կամ դրա համար վճարելուց

2.3.3. եթե սույն պայմանագրին համապատասխան գույքի տեսականու հետ հանձնվել է տեսականու մասին պայմանի խախտմամբ գույք, պահանջել տեսականում վերաբերող պայմանին չհամապատասխանող գույքի փոխարինում՝ սույն պայմանագրով նախատեսված տեսականում համապատասխանող գույքով.

2.3.4. անպատշաճ որակի գույք հանձնվելու դեպքում իր ընտրությամբ պահանջել

ա) համաչափ պակասեցնելու գույքի գինը

բ) ողջամիտ ժամկետում անհատույց վերացնելու գույքի թերությունները,

գ) հատուցելու գույքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը.

2.3.5. գույքի որակին առաջադրվող պահանջների էական խախտումների դեպքում (չվերացվող թերություններ, ինչպես նաև այնպիսի թերություններ, որոնք չեն կարող վերացվել առանց անհամաչափ ծախսերի կամ ժամանակի կորստի կամ այնպիսիք, որոնք բազմիցս և կրկին ի հայտ են գալիս դրանք վերացնելուց հետո և նման բնույթի այլ թերություններ) իր ընտրությամբ

ա) հրաժարվել սույն պայմանագրից կատարելուց:

բ) պահանջել փոխարինելու անպատշաճ որակի գույքը սույն պայմանագրին համապատասխանող որակի գույքով.

**2.4. Գնորդը պարտավոր է**

2.4.1. ընդունել իրեն հանձնված գույքը, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավունք ունի պահանջել փոխարինելու գույքը կամ հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց.

2.4.2. կատարել այնպիսի գործողություններ, որոնք, սովորաբար ներկայացվող պահանջներին համապատասխան, անհրաժեշտ են իր կողմից համապատասխան գույքի ընդունումն ապահովելու համար.

2.4.3. վճարել գույքի արժեքը՝ սույն պայմանագրի 3.1. կետում նշված կարգով, ժամկետներում և գումարով.

2.4.4. գույքը Վաճառողից ընդունել հանձնման-ընդունման ակտով:

### 3. Գինը և վճարման կարգը

3.1. Սույն պայմանագրի հավելված 1-ով նշված գույքի ընդհանուր արժեքը կազմում է (20,176,786 քսան միլիոն մեկ հարյուր յոթանասունվեց հազար յոթ հարյուր ութսունվեց) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի, համաձայն Գնորդի մրցութային հանձնաժողովին ներկայացված գնային առաջարկի: 1 դոլարը 480 ՀՀ դրամին համարժեք

3.2. Գնորդը վճարում է սույն պայմանագրի 3.1. կետում նշված գումարը, հետևյալ հաջորդականությամբ.

ա) կանխավճար՝ ոչ ավելի քան 8,070,000 (ութ միլիոն յոթանասուն հազար) ՀՀ դրամ,

բ) գույքի արժեքի մնացած մասը՝ 12,106,786 (տասներկու միլիոն մեկ հարյուր վեց հազար յոթ հարյուր ութսունվեց) ՀՀ դրամ, կվճարվի սույն պայմանագրի հավելված 1-ով նշված գույքը Գնորդին հանձնելուց հետո 15 օրվա ընթացքում:

### 4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Կողմերը սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.2. Սույն պայմանագրի 3.1. կետով նախատեսված վճարների ցանկացած կետանցի դեպքում Գնորդը, կետանցի յուրաքանչյուր օրվա համար Վաճառողին վճարում է տույժ՝ վճարման ենթակա գումարի 0,1 տոկոսի չափով:

4.3 Սույն պայմանագրի 2.2.1. կետով նախատեսված ժամկետը խախտելու դեպքում Վաճառողը կետանցի յուրաքանչյուր օրվա համար Գնորդին վճարում է տույժ՝ սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված գույքի պակաս հանձնված մասի արժեքի 0,1 տոկոսի չափով:

### 5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ - ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագրի կնքումից հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

### 6. Վեճերի լուծման կարգը

6.1. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտականությունները չկատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ օրենսդրության համաձայն:

### 7. Այլ պայմաններ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և ավարտվում է պատշաճ կատարմամբ:

7.2. Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր և ստորագրվում են Կողմերի կողմից:

7.3. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Գնորդ | Վաճառող |
|---|---|
| «Սպիտակ- ֆերմեր» ՀԿ | «Դանիելյան» ՍՊԸ |
| ք. Սպիտակ, Ալեք Մանուկյան 5/1 | Լոռու մարզ, ք. Սպիտակ, Ա. Մանուկյան 5 |
| ՀՎՀՀ 06804407 | ՀՎՀՀ 06801811 |
| հ/հ 16032015849806 | հ/հ 2201333300047000 |
| ՎՏԲ բանկ Հայաստան | Սպարկ Կրեդիտ Ագրիկոլ բանկ |
| Գործադիր տնօրեն՝ Ս. Մարկոսյան | Տնօրեն Տ. Դանիելյան |

---

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**—— ապրիլի 2018 թվականի N Մ- -Ա**

**քաղ. Երևան**

## ՖՐԱՆՍԻԱՅԻ «ԲԺԻՇԿՆԵՐ՝ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ» ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 30-ի N 01.1/14-2/5814-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի մարտի 28-ի N 02/14/52283-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մարտի 28-ի N ՆՋ/22.2/3590-18, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2018 թվականի մարտի 29-ի N 04/15.1/1949-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 30-ի N 06/3-8/15955-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Այգեձորի 53, ՀՎՀՀ՝ 01538594) 2018-2019 թվականներին իրականացվող՝ 348,000,000 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի կառավարման ազգային ծրագրի բարելավմանն ուղղված համապարփակ աջակցություն» ծրագիրը (կցվում է):

2. Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը

ԼԿ·4/6

մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետին:

ԼԿ·4/6

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Բժիշկներ առանց սահմանների» միության
հայաստանյան մասնաճյուղի ղեկավար՝

Իզաբել Բրետոն

Երևան, 4-ը ապրիլի 2018թ.

«Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի կառավարման ազգային ծրագրի բարելավմանն ուղղված համապարփակ աջակցություն»

ԾՐԱԳԻՐ

| | |
|---|---|
| 1. Ծրագրի նպատակը | ▪ Հայաստանում բազմադեղորայքակայուն (ԲԴԿ) ՏԲ բուժմանն ուղղված գործունեության շարունակական փոխանցում ապահովել «Բժիշկներ առանց սահմանների» միությունից այլ գործընկերների՝ հիվանդի խնամքի նվազագույն ընդհատումներով, բազմադեղակայուն (ԲԴԿ) ՏԲ-ի բուժման որակի ապահովմամբ, ՏԲ նոր դեղորայքի կիրառմամբ, նոր ՏԲ դեղորայքով բուժվող ԲԴԿ ՏԲ հիվանդների սոցիալական աջակցության և կանխարգելման ծառայությունների ապահովմամբ<br>▪ Բարելավել տուբերկուլոզի այն դեպքերի հայտնաբերման գործընթացը, որոնք կարող են բուժվել նոր ՏԲ դեղորայքով:<br>▪ Առաջարկել բազմադեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդների որակյալ բուժում՝ օգտագործելով նրաշխավորված որակով և վերանպատակավորված դեղորայք:<br>▪ Բարելավել նոր ՏԲ դեղորայքով բուժվող բազմադեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդների և նրանց ընտանիքների կրթումը՝ բուժման հետևողականությունն ապահովելու և դրա ձախողումը կանխելու նպատակով<br>▪ Բարելավել վարակի վերահսկման քաղաքականությունը, և փորձը կիրառել տարածքներում:<br>▪ Աջակցել հեպատիտ C-ի դեմ բուժում ստացող դեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդներին՝ ներգրավվածություն և արդյունավետություն ապահովելու նպատակով: |

Ար.4/6

| | |
|---|---|
| | ▪ Իրականացնել նոր դեղորայքով ԲԴԿ ՏԲ բուժման վերաբերյալ առողջապահական կառույցների բուժանձնակազմի վերապատրաստում |
| 2. Ծրագրի բարենգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկերի տուրքերի և մաքսային վճարումների գծով սահմանված արտոնություններից: |
| 3. Բարեգործը | Ֆրանսիայի «Բժիշկներ առանց սահմանների» միություն<br>Ֆրանսիա, Փարիզ 75011, Սեն-Սաբեն փ. 8 |
| 4. Ծրագրի կատարող | Ֆրանսիայի «Բժիշկներ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ<br>ՀՀ, ք. Երևան, Այգեձորի 53բ, ՀՎՀՀ 01538594/ հեռ.՝ (010) 27 6445/ |
| 5. Ծրագրի իրկանացման վայրը և բնագավառը | Առողջապահական բնագավառ<br>Երևանի քաղաքային և Ստեփանակերտի հակատուբերկուլոզային դիսպանսերներ, Երևան քաղաքի տուբերկուլոզի կաբինետներ, Աբովյան քաղաքի հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր, Քրեակատարողական հիմնարկի դատապարտյալների հիվանդանոց՝ համագործակցելով Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոնի հետ /Առողջապահության նախարարություն/: |
| 6 Ծրագրի բյուջեն | **Ընդամենը նախատեսվում է.**<br>**348,000,000 ՀՀ Դրամ** |
| 7 Շահառուները (բարենգործություն ստացողները) | Դեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդները և ընտանիքները |
| 8. Ծրագրի իրականացման տևողությունը | **1-ը ապրիլի 2018թ - 31-ը մարտի 2019թ** |
| 9.Ծրագրի գործողությունների նկարագրությունը, ժամկետները և անհրաժեշտ ֆինանսական միջոցները | Դեղորայքի, բուժ. և լաբորատոր պարագաների և սարքավորումների ձեռքբերում և ներմուծում, դրանց առնչվող ծառայությունների և փոխադրման ծախսեր<br><br>**Ընդամենը՝ 185,000,000 ՀՀ Դրամ** |
| | ՀՀ առողջապահության նախարարության և ԲԱՍ-ի բուժ. աշխատակազմերի ուսուցման (մենթորինգ), տնտեսկատվական ծախսեր<br><br>**Ընդամենը՝ 37 000 000 ՀՀ դրամ**<br>2018թ. 2-րդ եռամսյակ՝ 10,000,000 ՀՀ դրամ<br>2018թ. 3-րդ եռամսյակ՝ 10,000,000 ՀՀ դրամ<br>2018թ. 4-րդ եռամսյակ՝ 12,000,000 ՀՀ դրամ<br>2019թ. 1-ին եռամսյակ ՝ 5,000,000 ՀՀ դրամ |

Ար.4/6

| | |
|---|---|
| | Սոցիալ-հոգեբանական անհատական աջակցություն (հիգիենայի պարագաներ, կենսապայմանների բարելավում, հիվանդներին տրամադրվող տրանսպորտային ծախսեր) կարիքավոր հիվանդներին, դեղորայքի ընդունման վերահսկողություն՝ բուժման հետևողականությունն ապահովելու նպատակով, հիվանդների խնամք տնային այցելությունների միջոցով և հեռակառավարմամբ:<br><br>**Ընդամենը՝ 22, 000,000 ՀՀ Դրամ**<br>2018թ. 2-րդ եռամսյակ՝ 6,000,000 ՀՀ դրամ<br>2018թ. 3-րդ եռամսյակ՝ 6,000,000 ՀՀ դրամ<br>2018թ. 4-րդ եռամսյակ՝ 6,000,000 ՀՀ դրամ<br>2019թ. 1-ին եռամսյակ ՝ 4,000,000 ՀՀ դրամ |
| | Համնյալ սնունդ խոցելի հիվանդների համար՝ ապահովելու բուժման նկատմամբ հետևողականությունը<br><br>**Ընդամենը՝ 6,700,000 ՀՀ Դրամ**<br>2018թ. 2-րդ եռամսյակ՝ 2,000,000 ՀՀ դրամ<br>2018թ. 3-րդ եռամսյակ՝ 2,000,000 ՀՀ դրամ<br>2018թ. 4-րդ եռամսյակ՝ 2,000,000 ՀՀ դրամ<br>2019թ. 1-ին եռամսյակ ՝ 700,000 ՀՀ դրամ |
| | Կազմակերպչական և գրասենյակային ծախսեր<br><br>**Ընդամենը՝ 54,000,000 ՀՀ Դրամ**<br>2018թ. 2-րդ եռամսյակ՝ 13,500,000 ՀՀ դրամ<br>2018թ. 3-րդ եռամսյակ՝ 13,500,000 ՀՀ դրամ<br>2018թ. 4-րդ եռամսյակ՝ 13,500,000 ՀՀ դրամ<br>2019թ. 1-ին եռամսյակ ՝ 13,500,000ՀՀ դրամ |
| | Ավտոմեքենայի պահեստամասերի և վառելիքի ձեռքբերման, ընթացիկ խնամքի ծախսեր<br><br>**Ընդամենը՝ 19,000,000 ՀՀ Դրամ**<br>2018թ. 2-րդ եռամսյակ՝ 5,000,000 ՀՀ դրամ<br>2018թ. 3-րդ եռամսյակ՝ 5,000,000 ՀՀ դրամ<br>2018թ. 4-րդ եռամսյակ՝ 5,000,000 ՀՀ դրամ<br>2019թ. 1-ին եռամսյակ ՝ 4,000,000 ՀՀ դրամ |

| | |
|---|---|
| | Շինարարական-վերանորոգման աշխատանքներ Աբովյանի ՀՀՏԴ –ում և ՀՀ ՏԲ կառույցներում<br><br>**Ընդամենը՝ 23,300,000 ՀՀ Դրամ**<br>2018թ. 2-րդ եռամսյակ՝ 6,500,000 ՀՀ դրամ<br>2018թ. 3-րդ եռամսյակ՝ 6,500,000 ՀՀ դրամ<br>2018թ. 4-րդ եռամսյակ՝ 6,500,000 ՀՀ դրամ<br>2019թ. 1-ին եռամսյակ ՝ 3,800,000ՀՀ դրամ |
| | Սանիտարահիգիենիկ և վարակի վերահսկման պարագաների ձեռքբերում և ներմուծում, դրանց առնչվող ծառայությունների և փոխադրման ծախսեր<br><br>**Ընդամենը՝ 1,000,000 ՀՀ Դրամ**<br>2018թ. 2-րդ եռամսյակ՝ 250,000 ՀՀ դրամ<br>2018թ. 3-րդ եռամսյակ՝ 250,000 ՀՀ դրամ<br>2018թ. 4-րդ եռամսյակ՝ 250,000 ՀՀ դրամ<br>2019թ. 1-ին եռամսյակ ՝ 250,000 ՀՀ դրամ |
| 10. Սույն ծրագրի շրջանակներում գնման գործընթացը և ապրանքների ներմուծումը, ծառայությունների համառոտ նկարագրությունը, քանակը, ծավալը և գինը (եթե կարծում եք, որ պետք է ազատվել հարկերից կոնկրետ գումարի մասով) | Դեղորայքի, բժշ. և լաբորատոր պարագաների և սարքավորումների ձեռքբերում և ներմուծում, դրանց առնչվող ծառայությունների և փոխադրման ծախսեր<br><br>**Ընդամենը՝ 185,000,000 ՀՀ դրամ,**<br><br>**Որից՝**<br>Ներմուծվող դեղորայք, բժշ. և լաբորատոր պարագաներ և սարքավորումներ, դրանց առնչվող ծառայությունների և փոխադրման ծախսեր՝<br>**166,000,000 ՀՀ դրամ,**<br><br>**Տեղական շուկայից ձեռք բերվող** դեղորայք, բժշ. և լաբորատոր պարագաներ և սարքավորումներ՝<br>**19,000,000 ՀՀ դրամ** |
| | ՀՀ առողջապահության նախարարության և ԲԱՍ-ի բժշ. աշխատակազմերի ուսուցման, վերապատրաստման, այդ թվում՝ ՀՀ-ից դուրս, տեղեկատվական ծախսեր.<br><br>Ընդամենը՝ 37 000 000 ՀՀ դրամ, |

Լր. 4/6

| | |
|---|---|
| | այդ թվում՝<br><br>Հյուրանոցային ծառայություններ՝ 7,000,000 ՀՀ դրամ<br>Սննդի ձեռքբերում՝ 5,500,000 ՀՀ դրամ<br>Սրահի և տեխնիկայի վարձակալություն՝ 10,000,000 ՀՀ դրամ<br>Ուսուցողական նյութերի, ձեռնարկների տպագրություն ՝ 6,500,000 ՀՀ դրամ<br>Գրենական պիտույքների ձեռքբերում՝ 2,500,000 ՀՀ դրամ<br>Արտագնա վերապատրաստումների ավիատրանսպորտային ծախսեր՝ 5,500,000 ՀՀ դրամ |
| | Սոցիալ-հոգեբանական անհատական աջակցություն (հիգիենայի պարագաներ, կենսապայմանների բարելավում, հիվանդներին տրամադրվող տրանսպորտային ծախսեր) կարիքավոր հիվանդներին, դեղորայքի ընդունման վերահսկողություն՝ բուժման հետևողականությունն ապահովելու նպատակով, հիվանդների խնամք տնային այցելությունների միջոցով և հեռակառավարմամբ:<br><br>**Ընդամենը՝ 22, 000,000 ՀՀ Դրամ** |
| | Հավելյալ սննդի խոցելի հիվանդների համար՝ ապահովելու բուժման նկատմամբ հետևողականությունը<br><br>**Ընդամենը՝ 6,700,000 ՀՀ Դրամ** |
| | Կազմակերպչական և գրասենյակային ծախսեր<br><br>**Ընդամենը՝ 54,000,000 ՀՀ դրամ** |
| | Ավտոմեքենայի պահեստամասերի և վառելիքի ձեռքբերման, ընթացիկ խնամքի ծախսեր<br><br>**Ընդամենը՝ 19,000,000 ՀՀ Դրամ** |
| | Շինարարական-վերանորոգման աշխատանքներ Աբովյանի հանրապետական ՏԴ –ում և ՀՀ ՏԲ կառույցներում<br><br>**Ընդամենը՝ 23,300,000 ՀՀ դրամ** |

Լր. 4/6

| | |
|---|---|
| | Սանիտարահիգիենիկ և վարակի վերահսկման պարագաների ձեռքբերում և ներմուծում, դրանց առնչվող ծառայությունների և փոխադրման ծախսեր<br><br>Ընդամենը՝ **1,000,000 ՀՀ Դրամ** |
| 11. Ծրագրի իրականացմանն առնչվող կազմակերպչական ծախսեր | Ընդամենը՝ 54,000,000 ՀՀ Դրամ, որից՝<br>Գրասենյակի վարձակալության ՝ 26,500,000 ՀՀ դրամ<br>Ընթացիկ շահագործման, վերանորոգման ծախսեր՝ 3,500 000 ՀՀ դրամ<br>Գրենական պիտույքներ և գրասենյակային տեխնիկա, կահույք ՝ 8,000,000 ՀՀ դրամ<br>Կոմունալ (գազ, էլեկտրաէներգիա, ջուր) ՝ 8,500,000 ՀՀ դրամ<br>Հեռահաղորդակցության ծախսեր (հեռախոս և համացանց)՝ 6,500,000 ՀՀ դրամ<br>Ներկայացուցչական ծախսեր՝ 1,000,000 ՀՀ դրամ |
| 12. Համագործակցություն պետական և տեղական մարմինների, այլ ՀԿ-ների հետ | ՀՀ Առողջապահության նախարարություն, ՀՀ Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Տուբերկուլոզի ազգային ծրագրի, Գլոբալ հիմնադրամ, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն |
| 13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվություններ ՀՀ Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության, ինչպես նաև կազմակերպության գլխամասային գրասենյակի մակարդակով |

Կատարող՝ Ն.Միրզոյան Հեռ. 055 55 90 33

---

Ար. 4/6

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Ա Ռ Ա Ջ Ի Ն  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

N 01.1/14-2/5814-18
30.03.18թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
23.03.2018թ. N 15/15.4/4551-18գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից 2018-2019 թվականներին իրականացվող ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ ներկայացված ծրագիրը վերախմբագրման կարիք ունի, քանի որ ծրագրի 9-րդ կետերում նախատեսված ծախսերի հանրագումարը չի համապատասխանում 6-րդ կետում նշված 363,000,000 դրամ ծրագրի բյուջեին, ինչպես նաև ծրագրի 9-րդ կետում նշված ծառայությունների և ապրանքների ձեռքբերման (ներմուծման) գործարքները և դրանց համար նախատեսված ֆինանսական միջոցների ծավալը չի համապատասխանում ծրագրի 10-րդ կետում նշված գումարներին, իսկ 10-րդ կետում՝ ներկայացված չէ 166,000,000 դրամի չափով ներմուծվող բեռների տեսականին: Միաժամանակ հայտնում ենք, որ անհրաժեշտ է որոշման նախագծի անվանումը համապատասխանեցնել կից ներկայացված ծրագրի վերնագրին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նունա Կարապետյան, հեռ. 011 910-437

N 034/9706-18
30.03.18թ.

Ար. 4/6

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 Էլ. փոստ՝ artur.hovhannisyan@justice.am

28.03.18 N 02/14/52283-18

Ձեր N ____________

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 23-ի 15/15.4/4551-18 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից 2018-2019 թվականների ընթացքում իրականացվող ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 15

N 035/9461-18
28.03.18թ

---

Ար. 4/6

**ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

«29» ......03...... 2018թ. N 04/15.1/1949-18

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
Ս. Տեր-Սիմոնյանին

*Ի պատասխան Ձեր 23.03.2018թ.*
*թիվ 15/15.4/4551-18 գրության*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի կառավարման ազգային ծրագրի բարելավմանն ուղղված համապարփակ աջակցություն» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունն իր իրավասությունների շրջանակում դիտողություններ և առաջարկություններ չունի:

Հարգանքով՝

Կ. Իսախանյան

*Կատարող՝ Փ. Դարբինյան*
*Տարածքային կառավարման վարչություն*
*Հեռ. 010-51-13-16*

N 025/9635-18
29.03.18թ

Կր. 4/6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 60) 80 80 03
էլ. փոստ info@moh.am

28.03.18թ. N ՖՔ/22.2/3590-18
Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 2018 թվականի մարտի 23-ի թիվ 15/15.4/4551-18 գրության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի կառավարման ազգային ծրագրի բարելավմանն ուղղված համապարփակ աջակցություն» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՆԵԼՍՈՆ ՋՈՒԼՈՅԱՆ

Կատարող՝ Նաիրա Փափախյան
Դեղորայքային քաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս (+ 374 60) 80 80 03 14 22

N020/9462-18
28.03.18թ.

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Կր. 4/6

«30» 03 2018թ.
No 26/3-8/15955-18
Ձեր No ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 23.03.2018թ.
թիվ 15/15.4/4551-18 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործա-կան ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի կառավարման ազգային ծրագրի բարելավմանն ուղղված համապարփակ աջակցություն» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկում ենք.

1. Ծրագրի 10-րդ կետով ներկայացված ծրագրի շրջանակներում ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների բյուջեի բաշխվածքը (որտեղ ներառված են նաև կազմակերպչական ծախսերը) համապատասխանեցնել ծրագրի 6-րդ կետով նախատեսված ծրագրի բյուջեին:

2. Ծրագրի 9-րդ և 10-րդ կետերից հանել «Հայաստանում ԲԱՍ երեսնամյակի տոնակատարության կազմակերպչական միջոցառումները և այդ նպատակով նախատեսված ծախսերը՝ այդ մասով նվազեցնելով ծրագրի բյուջեն, քանի որ դրանք չեն բխում ծրագրով սահմանված նպատակներից:

3. Ծրագրի 11-րդ կետում մանրամասնել կազմակերպչական ծախսերի կազմը և արժեքները:

Հարգանքով՝ Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎԱՀԿ
Ն.Բեժանյան, Հեռ. 060544705

N044/9655-1
30.03.18

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

Մր. 4/6

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի կառավարման ազգային ծրագրի բարելավմանն ուղղված համապարփակ աջակցություն» ծրագրի մասին որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ ներկայացված ծրագիրը վերախմբագրման կարիք ունի, քանի որ ծրագրի 9-րդ կետերում նախատեսված ծախսերի հանրագումարը չի համապատասխանում 6-րդ կետում նշված 363,000,000 դրամ ծրագրի բյուջեին, ինչպես նաև ծրագրի 9-րդ կետում նշված ծառայությունների և ապրանքների ձեռքբերման (ներմուծման) գործարքները և դրանց համար նախատեսված ֆինանսական միջոցների ծավալը չի համապատասխանում ծրագրի 10-րդ կետում նշված գումարներին, իսկ 10-րդ կետում՝ ներկայացված չէ 166,000,000 դրամի չափով ներմուծվող բեռների տեսականին: Միաժամանակ հայտնում ենք, որ անհրաժեշտ է որոշման նախագծի անվանումը համապատասխանեցնել կից ներկայացված ծրագրի վերնագրին: | -նախագծում կատարվել է առաջարկված փոփոխությունը: -Կազմակերպությունը ներկայացրել է ծրագրի լրամշակված տարբերակը (կցվում է): |
| **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի վերաբերյալ առաջարկում ենք. 1. Ծրագրի 10-րդ կետով ներկայացված ծրագրի շրջանակներում ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների բյուջեի բաշխվածքը (որտեղ ներառված են նաև կազմակերպչական ծախսերը) համապատասխանեցնել ծրագրի 6-րդ կետով նա-խատեսված ծրագրի բյուջեին: 2. Ծրագրի 9-րդ և 10-րդ կետերից հանել «Հայաստանում ԲԱՍ երեսնամյակի տոնակատարության կազմակերպչական միջոցառումները և այդ նպատակով նախատեսված ծախսերը՝ այդ մասով նվազեցնելով ծրագրի բյուջեն, քանի որ դրանք չեն բխում ծրագրով սահմանված նպատակներից: 3. Ծրագրի 11-րդ կետում մանրամասնել կազմակերպչական ծախսերի կազմը և արժեքները: | -Կազմակերպությունը ներկայացրել է ծրագրի լրամշակված տարբերակը (կցվում է): |

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ձր. 4/Յ.1

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**ապրիլի 2018 թվականի N Մ- -Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի -ի N, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մարտի -ի N և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի -ի N եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (ամպիտում տեսակի դեղանյութ, 30 սրվակ, 1 տեղ, 10 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 7,930 հնդկական ռուփի, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ար. 4/7.1

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

30. 03. 18թ.
№ 01.1/14-2/5853-18

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
28.03.2018թ. N 15/15.11/4864-18 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Արմինե Բաղդանյան
Հեռ. 011 910-435

30. 03. 18թ.
№ 034/9787-18

---

Ար. 4/7.1

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 60) 80 80 03
էլ. փոստ info@moh.am

03.04.18թ. N ՁԳ/22.2/3743-18
Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 2018 թվականի մարտի 28-ի թիվ 15/15.11/4864-18 գրության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՆԵԼՍՈՆ ՋՈՒԼՈՅԱՆ

Կատարող՝ Նաիրա Փափախչյան
Դեղորայքային քաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս (+ 374 60) 80 80 03 14 22

03. 04. 18թ
№ 020/9942-18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Ար. 4/7.1

«04» ապրիլ 2018թ.
No 06/3-8/16660-18
Ձեր No ______________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 28.03.2018թ.
թիվ 15/15.11/4864-18 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՄԿ
Ն.Բեժանյան, Հեռ. 060544705

04. 04. 18թ
№ 044/10095-18



Ար. 4/7.2

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**հոկտեմբերի 2018 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)**

